

Տ Ե Ղ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Պ Ր Ո Ի Ս Ա Յ

Զէյէպի սուլդան Մէհէմէտայ Ա որդւոյ Երլտրմայ մզկիթն կառուցեալ է 'ի ծայր քաղաքին յարևելս կոյս 'ի բարձրահայեաց վայրի . տաճիկ ճարտարպետութիւն փայլէ 'ի սմա ներքոյ և արտաքոյ , որոյ նման չգտանի 'ի Պրուսա . հիանալի է շրջապատ արտաքին զրանն , բարձրաքանդակ գրութեամբք 'ի կճի , կարգ մի քիւֆի տառիւք և կարգ մի սովորականաւն , և առ նոքզք 'ի վերոյ և 'ի ներքոյ պէսպէս քանդակք զարդուց , որպէս և խորշիցն որ երկուստեք զրանն հանդէպ միմեանց : Ա՛յլ վսեմութիւն է ներքին տեսեանն , թող զճոխութիւն զարդուց և նրկարուց տեղոյ միհրապին , որոյ շրջապատն ողջոյն (որ և երկուստեք թևս արձակեալ է՝ անտես արտաքուստ , որպէս զի արտաքին որմունք միահետ ուղղադիծ են) իբր մարդաչափ և կէս բարձրութեամբ բազմանկիւնի կանաչ յախճապակօք պատեալ է , և յամենեւին 'ի նոսա ոսկեզոյն մանր ծաղկանկարք : Հանդէպ միհրապին 'ի բարձու 'ի վերայ ներքին զրան է տեղի աղօթից թագաւորին , պատեալ բովանդակ քառակուսի յախճապակօք և 'ի վերայ նոցա պէսպէս զարդք դունազոյն նկարուք , և բարձրաքանդակ գրութիւնք մեծատառք : Սովին զարդուք են յօրինեալ և երկոքին սենեկաչափ խորշքն հանդէպ միհրապին երկուստեք ներքին զրանն , միահետ հաւասար գեանոյն , որք և աղօթատեղիք էին վէզիրին և դենպետին : Զմզկիթս զայս Եէշի ձաւի կոչեն . իբր զի նախ մինարէ նորա կանաչ յախճապակօք պատեալ էր . այլ յետ ժամանակաց կայծակնահար եղեալ վերբստին շինեցաւ , և արդ բոով սպիտակացուցեալ է :

Մահարձան նորին սուլդան Մէհէմէտի մօտ է 'ի հարաւոյ մզկիթին , բարձրահայեաց քան զնա , ութանկիւնի և բարձրագմբէթ . պատեալ կանաչ յախճապակօք արտաքոյ , իսկ 'ի ներքոյ ըստ չափոյ բարձրութեան մզկիթին : Ի սմա ամենայն զարդք որմոցն համարուեստ է որմոց մզկիթին . և միհրապին զարդք և բարձրաքանդակ գեղնագոյն գրութիւնքն 'ի նոսին 'ի վերայ կանաչ նկարէն յախճապակի՝ նման են զարդուց երկց սենեկաց մզկիթին : Արդ գերեզման սուլդանին է 'ի միջին տեղոյ , և շրջապատ պատուանդանի նորին նոյնօրինակ բարձրաքանդակ տառիւք զրոյմեալ . 'ի ստորև նորա առաջին գերեզմանն որ բովանդակ նոյնպիսի զրոյմածովք է զարդարեալ , է երէց դատեր նորին՝ անուանելոյ Սէլճի գատրն . և վերջինն՝ տախտակամած՝ դայեկին , և 'ի միջի նոցա հարճիցն և այլոց դատերաց :

Սուլդան Մուրատայ Բ մզկիթն է 'ի համանուն թաղի 'ի ձախմէ քաղաքին , և մահարձանք առ նմին բազումք՝ յընդարձակ շրջապատի , յորում և դպրոց և իււնարէք , բովանդակն քարաչէն : Մզկիթն չորեքգմբէթեայ երևեալ արտաքուստ , երկգմբէթեայ երևի 'ի ներքուստ , ուր և ողջոյն որմունքն մարդաչափ և կէս բարձրութեամբ 'ի գեանոյն պատեալ են կանաչ յախճապակօք . հանդէպ միհրապին է վերնատուն վանդակապատ՝ յորում թագաւորաց միայն օրէն է կալ 'ի ժամ աղօթից : Ի ձախակողմն մզկիթին են մահարձանքն , փոքու խորոցաւ անջատեալք 'ի

միմեանց . մահարձանն Մուրատայ՝ դրանն զարդարուն առաստաղաւ՝ թէպէտ և փայտեայ՝ որոշի յայլոց . առաջի նորա շատրուան և առ նովաւ անուանի սօսին Հալքալը չինար , իբրու զի երկուք յոստոց մեծի ծառոյդ յիրեար եկեալ աղեղնաձև միացեալ՝ մանեակ մի մեծ գործեալ են , և յետ միանալոյն վերստին արձակեալք 'ի վեր : Գերեզման Մուրատայ կամ տապանն կճեայ բաց է 'ի վերոյ և լի հողով , յորում ցանեն ցորեան , և ոռոգի 'ի գմբեթէն որոյ բաց է և կեդրոնն : Զգլխարկ նորա բոլորչի մեծատարած և սպիտակ փաթուլթիւ որպէս այլոց թագաւորաց և 'ի միջին տեղւոյ կոնաձև և ոսկէպատ՝ սուլդան Մահմուտ կամեցաւ յաւուրս մեր փոխադրել 'ի թագաւորեալ քաղաքն , և եկեալ որ տանելոցն էր , ասեն տեղացիք , տանջեալ յաներևոյթ զօրութենէ , ձեռնթափ դարձաւ յետս : Առ միհրապան եղեալ է արկղ 'ի բարձու , յորում պահի մագ մի 'ի մօրուացն օրէնսդրի նոցա Մահմէտի , որպէս և 'ի Տավուլլու մանապրր : Միջնորմով զատուցեալ է 'ի սմանէ մահարձան Ալայէտտինայ որդւոյն Մուրատայ սպանելոյ 'ի հօրէն իւրմէ . և առ նմա կան 'ի նմին սենեկի այլ ևս երեք գերեզմանք : Երկրորդ մահարձանն է Քանունի սուլդան Մուստաֆայի և երից զաւակաց նորա առ նմա . և չըջապատ նորին 'ի ներքուստ պատեալ յախճապակօք : — Յերրորդումն երկու գերեզմանք են հարճից սուլդան Մուստաֆայի , որք ըստ ասելոյ Տաճկաց դատերք են միոյ յերոպացի թագաւորաց : Իցեն թերևս իշխանի ուրուք նուաճելոյ 'ի Մուրատայ : — Ի չորրորդումն են տապանք երից դատերաց Ֆէթիհի , որոց մին կոչի Քօրքուտ սուլդան : — Ի հինգերորդումն կան չորք թագաւորազունք անծանօթք . և մահարձանն պատեալ 'ի ներքուստ յախճապակօք : — Վեցերորդն կոչի Էպէ գաւորն , դայեկի որդւոց Մուրատայ : — Եօթներորդն կիշ շուշուր , դատեր սուլդան Պայէզիտայ Բ . և առ ընթեր երեք ևս այլ անծանօթք : — Ութերորդն Այնէշահ , դուստր նորին Պայէզիտայ . առ որով կան երկու ևս այլ : — Իններորդ ճէմ սուլդան , եղբայր նորին Պայէզիտայ . առ ընթեր կան նորա և երեք ևս այլ . և մահարձանն պատեալ է յախճապակօք : — Տասներորդ մահարձանն է առ ընթեր մկլիթին յառաջնում տեղւոյ , և է սուլդան Ահմէտի և սուլդան Մուսայի որդւոց նորին Պայէզիտայ . և առ ընթեր նոցա երկու ևս , և առ նոցա ոտիւքն այլ ևս երկուք , քերց Ահմէտի . մահարձանս այս պատեալ է կանաչ յախճապակօք : — Մետասաներորդ համարի մահարձանն՝ որ արտաքոյ կայ պարսպին . և է գերեզման խոհարարին նորին սուլդան Մուրատայ Բ , և անուն նորա Գաւրըշտըրաւն . զի որպէս պատմեն Տաճիկք 'ի խոհարարութեան իւրում փոխանակ շերեփոյ հոլանի բազկան խառնէր զկատսայ կերակրոյն . և առ անհեղեղ քաջութեանն կամ թէ ասել անզգայութեանն՝ արժանի եղև առանձին մահարձանաւ անմոռաց մնալ :

Էմիր աւշրաւն . սա ոչ է 'ի թագաւորաց , այլ 'ի ցեղէն Մահմէտի եօթնևտասներորդ ուխտատեղի համարեալ առ Տաճիկս և մեծապէս պատուեալ . նմին իրի և չէ մարթ օտարազգեաց մտանել 'ի մահարձան նորա եթէ չգտցի ընկերակից յարանց եպարքոսին : Արդ մահարձան նորա և մկլիթն չինեալ են հանդէպ միմեանց 'ի բարձրաւանդակ տեղւոյ 'ի հարաւ կուսէ Երլորմայ : Մզկիթն չունի ինչ արժանի յիշատակաց . իսկ որմն մահարձան նորա հանդէպ մկլիթին պատեալ է արտաքուստ յախճապակօք : Բաղում հարստութեանց ասեն լինել 'ի ամա յառաջագոյն , այլ արդ ոչ ևս :

Ընդ մէջ Եւչիլ-ձամի և Էմիր-սուչրասնայ 'ի փոքր գերեզմանոցի Տաճկաց է և այլ մահարձան մի սրածայր գմբէթիւ. բաց են կողմանք նորա քառակուսի սեամբք և կամարօք յիրեար կցեալք. այլ անզարդ պարզութիւն կճեայ քարանց երկց կողմանցն և վայելուչ զարդաձև փորուածք միոյ կողմանն՝ որ իբրև ճակատ ձևանայ, և դուռնն փոքրիկ՝ հաճոյ է աչաց 'ի տեսանել. յատակն 'ի միջավայրին գետնափոր է գմբէթայարկ ցած, և այժմ՝ քայքայեալ, տեղի զետեղելոյ զիականն : Զմանէ ասն շինեալ 'ի Պայէզիտ փաշայէ ումնմէ վասն իւր, այլ յաքսորս մե. ուեալ նորա՝ մնայ ամայի :

Ի նորաչէն մահարձանս՝ երևելի է այն որ կայ 'ի ներքս 'ի դղեկին մօտ առ Եէր գաբուսի, և կոչի Հազրէթի Էֆրատէ, 'ի բարձրահայեաց վայրի առ եզր սեպացեալ քառածեօի. ձև շինուածոյն է ըստ նոր ախորժակաց ճարտարպետութեան, և ոչ գմբէթաւոր : Բազում գերեզմանք են 'ի նմա. 'ի միջին տեղուջ ամփոփեալ է նա ինքն Էֆթատէ որ լեալ է երբեմն մի յերևելի էվիայից առ Տաճիկս. յաջմէ նո. բին Մաչրբա իւսքուն, և 'ի ձախմէ որդիք նորա Մէհէմմէտ և Մուստաֆա, և ինն այլ որ կան անդ՝ թոռուկք են նորա :

Ընդ մահարձանս համարելի են և քանի մի տապանք շէյխից, և Մեվլանանէ տէվրիչաց, մեծագործ շինուածով և բողոչի սենեկօք, ուր հանդէս պարերգութեան կատարի 'ի նոցանէ յաւուր ուրբաթու երգօք նուագարանաց :

ՍԷՔ ՊԱՇԻ. ԵՒ ԿԱՄՈՒՐՔՔ ՆՈՐԱ. — Յայլեայլ զետակացն որ ընդ ձորամէջս քաղա. քին հոսին 'ի լեբանց, հզօրագոյն է հոսեալն ընդ Սէք պաշի ձոր սրընթաց վա. զիւք. և է ձորս այս մի 'ի գեղեցկադիր թաղից քաղաքին երկուստեք ունելով բարձրահայեաց տունս հանդէպ միմեանց բնակեալ 'ի Հայոց, այլ և այլ կամրջօք, յորոց երևելի են երկդքին. ոչ աղեղնաձև այլ հարթայատակ անցիւք իբրև զմի 'ի փողոցաց է առաջինն յանուանէ ձորոյն կոչեցեալ Սէք պաշի, և երկրորդն Ըն. կաւնչր քեօփրիշուիշ միակամար. յիշատակաց արժանի է անսովոր շինուած կամրջիս. զի բովանդակ թանձրութիւն նորա երկուստեք կամարին՝ ընդ որով ան. ցանէ գետն, դատարկ է, և մարթ է մտանել 'ի ներքս. իսկ 'ի վերայ կամրջին դարձեալ կամարաձև է ծայր 'ի ծայր, և երկուստեք կարգաւ կրպակք են մե. տաքսագործ ոստայնանկաց. 'ի կրպակացդ այտի իջանեն 'ի ներքսակողմն անդր կամրջին :

Նախնի շինուածոց մնացորդ է և աւերակն մօտ առ Արապ ճամիսի 'ի վերայ ճանապարհին, որոյ երեքին կողմունք ստուար և հաստահիմն որմոցն կանգուն կան տակաւին, և երևին 'ի նոսին բազմաթիւ ծակտի նշան ջրանցից. միջոց տա. րածութեան տեղոյն անդաստան գործեալ է թթենեաց :

ՇԱՐԱՊ ՄԱՂԱՋԱՍԸ. — Արտաքոյ ամրոցին մօտ առ Գարլըճա գաիուսու քարան. ձաւ գործեալ է 'ի բնութենէ չափաւոր մեծութեամբ. առ որով եւրոպացւոյ ու. րումն տուն շինեալ, և զբնութեան շինուածն այլ ևս ընդարձակեալ բազմուղի ճանապարհաւ 'ի ձեռն մրճահարութեան, զի զիւրափշրելի է քարածայռ անձա. ւին, մառանս գինւոյ արարեալ է :

ՆԻԿՈՒՅԱՐ ԳԵՏ. — Գետն նիլոնփար զոր ուամիկք իշիլիֆէր սույսը կոչեն, իջա. նէ 'ի լեբանցն որ յարեմոտից հարաւոյ, և խաղացեալ ընդ բովանդակ երկայնու. թիւն գաշտավայրին Պրուսայ գնայ յարեւելս կոյս : Երկու կամուրջք կան 'ի վերայ

նորա մեծաշէնք . Ապտալ քեօփրիշաիւ անարատ մնացեալ , և Միսրապլլը քեօփրիւ կիսակործան , զոր և փայտիւ նորոգեալ են :

ԲԱՂԱՆԻՔԸ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՈՒՐՅ . — Ժամաւ միով հեռի 'ի քաղաքէն յարևմուտս կոյս են անուանի բաղանիքն ինքնաբուղիս ջերմ ջրոց . և են մեծաւ մասամբ 'ի գիւղն Չէքիլիկէ մօտ առ միմեանս . կոչին այլ և այլ անուամբ , Պոյուզ կիւզէլ , Հիւսնիւզ կիւզէլ , Սէվիլիւզ , Էսկի-գաբլլընա , Չէքիլիկէ՝ յանուանէ գեղջն , որ և օգտակար ըրազոյն համարեալ է : Իսկ Քիւզիլիւզիւզ և Եէնի-գաբլլընա են 'ի վերայ ճանապարհին յաջ կուսէ մօտ 'ի գիւղն : Արտաքին տեսիլ Եէնի-գաբլլընային հոյակապ է յոյժ և բազմազմբէթ կապարապատ : Իսկ Էսկի գաբլլընայի յաղագս զառիվայր զրից տեղոյն՝ յատակն հարթեալ է հորիզոնական և 'ի ներքոյ կամարք բաց թողեալք իբրև ներքնատունք . և ջուրն աւելորդ 'ի բաղանեացն անցեալ ընդ այն թափի արտաքս , առ առուակաւն՝ ընդ որ նախ հոսի , և հանքային մասունքն զատուցեալք քարացեալ զիզանան երկուստեք : Ներքին շինուած բաղանեացդ նման է այլոց սովորական բաղանեաց , զմբէթաշէն և կճեայ , այսու ևեթ զանազանեալ՝ զի 'ի սոսա աւազան մեծ գործեալ 'ի միջին տեղով մարդաչափ խորութեամբ , անդր թողուն հոսել զջուրն , յորում և մտեալ լողանան . իւրաքանչիւր 'ի բաղանեացդ ունի մի մի աւազան մեծ կամ թէ ասել լողարան կճապատ . մշտա հոս են ջուրք նոցա զցայգ և զցերեկ : Բազումք 'ի բաղանեացդ ունին շուրջանակի բարձր և գեղեցկահայեաց սենեակս , ոմանք կրկնայարկ՝ այլք եռա-յարկ . և ամենայն որ 'ի լուանալ գայ 'ի քաղաքէն և կամ 'ի հեռաւոր տեղեաց , մանաւանդ յերիս ամիսս տարւոյն՝ 'ի մայիսի , յունիսի և յուլիսի , 'ի նոսին բնակէ : Զօգտակարութենէ ջուրց բաղանեացս և զայլ և այլ հանգամանաց նոցին բազում ինչ զրեաց զազղիարէն Պեռնարտ ոմն , և տպագրեաց 'ի Բիւզանդիոն յամին 1843 :

ՊՏՂԱԲԵՐՈՒԹԻՒՆ , ՎԱՃԱՌՔ , ԵՒ ԱՐՈՒԵՍՏՔ . — Հող երկրին Պրուսացւոց բազում ուրեք կարմրագոյն է , մանաւանդ արտաքոյ քաղաքին : Պտղաբերութիւն առատ , և երկիրն մշակեալ ժրաջան աշխատութեամբ . այգեստանք և զինի պատուական . այլ որոց անդաստանք իցեն և պարտէզք՝ փոյթ մեծ է թթենեաց մշակութեան վասն մետաքսի . համօրէն քաղաքն 'ի ներքոյ և արտաքոյ տեսանի թթենեօք զարգարեալ : Եւ զի այլ երևելի շահավաճառ չիք 'ի քաղաքիս բաց 'ի մետաքսէ , նմին իրի իբրև սկիզբն լինի կենդանանալոյ որդանց շերամոյ՝ ամենայն ժողովուրդն 'ի տունս և 'ի հրապարակս ճառ արկեալ խօսին զառատութենէ կամ զնուազութեանէ , զազնուութենէ և կամ զխոշորութենէ մետաքսին . առատագոյն տարւոյ բերք հաշուին մինչև ց' 78,000 օգգա , հանդերձ շրջակայ գիւղորէիւք՝ որ սահմանք են քաղաքին . իսկ ընտրելագոյն համարեալ են բերք Տէմիրթաշ գեղջ , նրբութեամբն և փայլունութեամբ : Մետաքս Պրուսացւոց ոչ միայն առաքի յայլ և այլ քաղաքս Ասիոյ և Եւրոպայ , այլ և 'ի նմին գործի . զի են անդ բազում մետաքսագործք ազգ ազգ կերպասուց , է որ զծանիչ և է որ ծաղկէնկար . թէպէտ և այժմ 'ի նախնի յաճախութենէն նուազեալ յոյժ 'ի պատճառս յաճախելոյ ձեռագործաց Եւրոպայ ընդ ամենայն Ասիա : Տէր մետաքսին չկարէ առանձինն կամ 'ի ծածուկ վաճառել . այլ նախ պարտի տանել առ արքունի կշորդապանն զոր կոչեն Միզան , և կշուել . և առ իւրաքանչիւր օգգա և կէս հասուցանել տէրութեան

տասն զուուշ, և ապա վաճառել որպէս ինչ արժէ մետաքս իւր: Իսկ որ զնէն պարտի վճարել մաքս քսան զուուշ:

ԱՇԽԱՐՀԱՀԱՄԱՐ, ԵՆԵՂԵՑԻՔ ԵՒ ԴՊՐՈՑՔ. — ՉՏաճկաց բնակչաց քաղաքին ասեն ոմանք լինել 400,000, որ անհաւատալի թուի. զՀայս 6,000, և զՅոյնս 3,500: Երկու եկեղեցիք են Հայոց. առաջին Աստուշաճաճիւն, որոյ որմունքն 'ի ներքուստ կիսով չափ բարձրութեան յախճապակզք պատեալ են. և սա է առաջնորդարանն եպիսկոպոսանիստ, գեղեցկադիր և բարձրահայեաց, շինեալ իբր տասն ամօք յառաջ (իբր 'ի 1833) յեպիսկոպոսութեան Յարութիւն վարդապետի Եղեսացոյ: Անդ է և դպրոցն մեծ, յորում կան մանկունք իբր վեց հարիւր. այլ ոչ քաջ յառաջադէմ որպէս վայել իսկ էր հնութեան հայազգի ժողովրդոց տեղւոյն քան զայլոց բազմաց, և առ բազմութեան նոցին, և համբաւոյ քաղաքիդ, իբրև նախադաս օտար քաղաքաց՝ յորս գաղթեալ է ազգ մեր: Դաստիարակք թէպէտ և աշխատասէրք իցեն և փոյթք, սակայն և ոչ ժողովուրդն առ հասարակ, զի չև հասեալ մանկան յերեքտասան կամ 'ի չորեքտասան ամ հասակի՝ յորում եռանդն հմտութեանց աճել սկսանի, հանեալ յուսումնարանէն տան յարհեստ ծառայական: Թող զի և հասարակաց լեզու քաղաքին 'ի տունս և 'ի հրապարակս տաճկերէն է. իսկ հայեցին զրեթէ բնաւ անլուր առ կանայս. բայց սահմանեալ են 'ի դպրոցին հայերէն խօսել: Երկրորդ եկեղեցին է յանուն սրբոյ Լուսաւորչին նորաչէն և փոքր. և առնթեր նորա ժամատուն և դպրոց:

Կ Է Մ Լ Է Յ Ի Կ

ԿԵՄԼԵՑԻԿ. որ է ըստ հնոց կիոս (Κίος), աւան 'ի ծայր հարաւային խորշի Մարմաուայ ծովուն, որ և կոչէր 'ի հնումն Խորշ կիոյ կամ կիւսնոշ (Cianus sinus), վեց ժամաւ հեռի 'ի Պրուսայէ. նաւահանգիստ է և երթեկ շոգենաւուց: Լեռնապատ է խորշն 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ. և աւանն շինեալ է 'ի ստորոտս հիւսիսային լեռանց: Շինուածք նորա տունք և կրպակք հասարակ յոյժ, և բնակիչքն յոյն, որոց են եկեղեցիք ինն: Տօնավաճառ լինի 'ի նմա յաւուրս կիւրակէից: Երկիրն բերէ առատ ձիթենի մինչև վաճառել 'ի պողոցն ամի ամի 30,000 օգգա, և ձէթ 500,000 օգգա: Սդ տեղւոյն անբարեխառն և ծանր, և ջուրն անբարի բաց 'ի միոյ աղբերէ: Ունի զբօսարան գեղեցկավայր 'ի թիկանց աւանին 'ի բլրի, զառաջեան ամրացուցեալ պարսպաւ և 'ի վերայ հարթայատակ, հովանացեալ 'ի բարձրաբերձ կաղամախեաց. և է անդ այազնա որ կոչի Այի Գուդաւնդիւն:

ԱՌԵՐԱՎՔ ՀՈՒԹԵԱՆՑ. — Ոչ սակաւ էին երեւիլի շինուածք 'ի սմա 'ի հնումն՝ որպէս յայտնի երեւին յաւերակացն: Յարեմտակողմն աւանին ժամաւ և կիսով հեռի 'ի վերայ արահետ ճանապարհին, յորոյ յաջմէ լերինքն են հանդերձ արտորէիւք և 'ի ձախմէ դարահոս և ափունք ծովուն, 'ի մէջ արտորէից կայ գմբէթաւոր սենեակ մի գետնափոր, զի հողոյ ծածկեալ զնա մինչև 'ի վեր, 'ի միոյ կողմանէ և եթ մտանելի է. և 'ի միջի ստորերկրեայ ուղի խցեալ փլածովք. վերնա-

խարխա մի անկեալ կայ ընդ մէջ սենեկին. զայս տեղի կոչեն Յոյնք Գաքազիսիւն. սիդա (ողողեալ) : Անդրագոյն կայ բոլորչի շինուած մի աշտարակաձև յարկա- ծածուկ, և հողն շուրջ զնովաւ բարձրացեալ մինչև 'ի վեր. շատ ջանացեալ է գեղջէից մրճօք անց գործել առ 'ի ներքս և չեն յաջողեալ. այս վայր կոչի Այի- գեաւիս : Ի հանդիպոյ նորա 'ի կողմն ծովեզերին երևի մասն ամրոցի իրիք 'ի ներքուստ մինչև 'ի վեր հաւասար ճանապարհին. և այլուր 'ի միջի արտորէից մե- ծատարած աւերակ մի զոր բաղանիս կոչեն, որոյ և գմբէթ կործանեալ՝ որմունք մնան ևեթ երկուց կողմանցն, յորս են խորշք 26 մարդաչափ բարձրութեամբ. զայս տեղի Առէքա կոչեն :

Կայ և յարեւելակողմն աւանին 'ի վերայ արահետ ճանապարհի կիսով ժամաւ հեռի յաւանէն ստորերկրեայ սենեակ մի 'ի տեղւոյն Այասօփիա կոչեցելոյ. և հուպ նմին սալայատակ քարնկէցիւ յերկայնութիւն. մօտ առ տեղեան գտան երբեմն մեծամեծ խեցեղէն բզուկք դատարկք և արդ ծածկեալ են ընդ հողով, և երկու այլ 'ի նոցանէ գտեալ փոքր մի 'ի վեր անդր լի ջրովք, և ջուրն հեղեալ 'ի վերայ քարանց՝ հալեալ ասեն զքարինսն : Մօտ առ տեղեան 'ի մէջ պարտիզին անկեալ կայ քար մի և 'ի վերայ նորա բարձրաբանդակ պատկեր արծուոյ : Անդրա- գոյն ևս քարանձաւ մի փոքր 'ի ձախմէ ճանապարհին և առ նմա քարահանք կը- ճոյ : Քառորդաւ ժամու հեռագոյն է տեղին Այի Պարաւակի ասացեալ. ուր են նստարանաձև միակտուր քարինք փորուածոյ, և 'ի վերայ քանի մի լատին տառք խանգարեալք. և 'ի վերայ քարածեռի բլրոյն նոյնպէս աստիճանք երկայնաձիգք : Յանդաստանս ուրեք աւանիս գտան երկու գերեզմանաչափ քարինք, և 'ի վե- րայ նոցա բարձրաբանդակ պատկերք. 'ի միումն կան կին և աղջիկ սքօղեալք վե- րուստ 'ի վայր, և 'ի միւսումն նաւամարտ :

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ի Կ Է Մ Լ Է Յ Ի Կ Է Ի Ն Ի Կ Ի Ա

Ոչ սակաւ գուարձալի է փոփոխութիւն տեսարանաց վայրացն որ ընդ մէջ Կէմէջիկի և Նիկիոյ. զի փոքր մի հեռացեալ 'ի Կէմէջիկէ ընդ արևելս կոյս՝ սկսա- նին երկուստեք գօտիք լերանց, ձորամէջ խորին կալով 'ի միջի հանդերձ գետա- կաւ՝ որ հոսի 'ի նիկիական լճէն 'ի խորշն Կէմէջիկի : Իսկ լերինքդ այդոքիկ եր- կուստեք գետակին մինչև ցգազաթունս՝ թէպէտ և անմշակելի, այլ ինքնաբոյսք խիտ առ խիտ և դեղնագոյն ծաղկօք զարդարեալ են : Յետ երից ժամուց ճանապարհի՝ բանի անձուկ կիրճ լերանցն, և երևի 'ի հեռաստանէ մեծատա- րած դաշտավայրն Պազարքէոյ օվասը 'ի ձախմէ, և յաջմէ լեառն Գաքըրլը տաղը, և ընդ մէջ երկոցուն կողմանցն Լիճն Նիկիոյ ծածանեալ հեզիկ հողմովք : Շուրջ գլճաւդ բազում են գիւղորէք, և ոչ սակաւք բնակեալ 'ի Հայոց, յորոց ե- րևելի են, յաջմէ՝ Սէօլէօզ, յորում տունք 300, ամենայն հայազգի, հանդերձ կա- րևոր արուեստաւորօք և նորաչէն վայելուչ եկեղեցեաւ յանուն սրբոց Հրեշտակա- պետաց և դպրոցաւ : Երևելի է 'ի գեղջս Խաչոյեան տոհմն՝ պատկառելի բազում գիւղորէից Հայոց և Տաճկաց իսկ : Ի ձախմէ լճին են Պազարքէոյ, Նոր գեղ

և որ այն ևս : Յաջակողմն լծին անթիւ ձիթաստանք են ցմեծ տարածութիւն :

Լիճն Նիկիոյ երկայնեալ ձգի յարևմտից յարևելք ինն ժամու գնացից . իսկ 'ի կէմէյիկէ մինչև յեզր լծին հինգ ժամք են : Քաղցր է ջուր նորա և ըմպելի , զոր և վարեն յամենայն պէտս շրջակայ գիւղորէքն . բերէ աւելի քան զքսան աղգս ձրկանց՝ ոչ միայն մանուռնց , այլ և մեծամեծաց : Ի հտրաւային եզերս լծին աճեցեալ է ջուրն որպէս պատմեն , և ծածկեալ զշինուածս տանց , որոց որմունք մակ հաւասար երեսաց լնայատակին երևին ընդ ջրով՝ յորժամ խաղաղ իցէ լիճն և անայէկոծ : Ի նմին կողման լծին երկու ժամու հեռի 'ի Նիկիոյ , 'ի վերայ ճանապարհին յաջմէ՝ 'ի մեծի ապառաժին երևի արձանագիր լատին այլ խանգարեալ : Թէպէտ և խոր է լիճս՝ որպէս ասեն , սակայն զուզնարեայ և եթ նաւակք ձկնորսաց գնան 'ի նմա :



Պեղմունք 'ի Պունպէա :

Այժմեան հնախոյզ հետազօտութիւնքն՝ որ մեծ խնամով 'ի գործ կը գրուին արդեամբ և ջանիւք զարգացեալ պետութեանց Եւրոպայ , իրաւամբք պատմական գիտութեանց ասպարէզն ընդարձակեցին նորանոր տեղեկութեանց աղբիւրներ գտնելով . և առանց երկմտութեան վերջի յիսնամեայ հետաքննութիւնքն հին պատմութեան վրայ յեզրափոխութիւն մը բերին . մանաւանդ բարեխական ու եգիպտական հնութիւնք որք թանգարանաց ընդունայն զարդ մը չըլլալէն զատ՝ նոյն ազգաց հնութեանը վրայ գեղեցիկ արշալոյս մը ծագեցին . և կը յուսացուի՝ անխոնջ հնախուզից անընդհատ վաստակովք՝ աւելի ևս պայծառ լուսաւորութեան հասնիլ :

Այսպիսի հետաքննական պեղում մ'ալ կ'ըլլուի նաև 'ի Պունպէա՝ որ Քրիստոսի 79դ. թուականին ցաւալի պատահարաւ ծածկեցաւ Վեսուվի համայնակուլ մոխրոյն տակ : Յամին 1755 յայտնուելով քաղբիս փլատակքն պեղմամբ , սկսաւ շարունակուիլ նոյն խուզարկութիւնը մինչև ցայսօր , ուսկից նորանոր հնութիւններ 'ի լոյս կ'ընծայուին : Մօտերս գտնուեցաւ ամբողջ

հացագործի մը տուն՝ փռովն հանդերձ , որոյ երկաթեայ մեծ դռնակը կրկին ունելիքով դեռ գոց էր : Դռնակը բանալով տեսեր են որ փռուը լի էր հացերով , նոյն կերպով ինչպէս որ շարուած էին եօթնևտասն դար և ութ տուն և երեք տարի յառաջ : Այդ հացերը թուով ութսուն և երկու հաս են . իսկ չափակցութեան , ձևին ու զանգուածոյն կողմանէ , 'ի բաց առեալ ծանրութիւնն ու գոյնը , նոյն գաղափարը կու տան ինչպէս որ ելած կրնայ ըլլալ հացագործին ձեռքէն . վրանին հացագործի և կամ ուրիշ մասնաւոր նշան մը չկայ . ձևերնին կլորակ է 20 հարիւրորդամէզը տրամագծով , տափակ ու մէջտեղը խոր և եզերքն ուռած : Իւրաքանչիւրը ութ հաւասար մասունք բաժնուած են խոր գծերով որք մէջտեղէն դէպ 'ի եզերք կը ձգուին : Գունով թուխ մթնագոյն են , բայց դիւրարեկ : Արդեօք խեղճ հացագործին մտքէն կրնար անցնիլ որ փռուը դրած հացերը , որոնք յաջորդ օրուան պիտոյիցը պիտի ծառայէին , ութևտասն դար վերջը յայտնուին :

Նոյն աւերակաց վրայ ուրիշ տեղ նորանշան տեսարան մ'ալ յայտնուեցաւ : Քանի մը գործաւորներ փոքրիկ ու աղքատին տեսքով տան մը պեղմանը վրայ աշխատելու միջոց մարդկային